

ՍՏՈՒԵՐՆԵՐ

Փոթորիկը տագարել էր...

Կապարային ամպերը դեռ ևս կուտակուած... դեռ ևս սպառնում էին յոգնած երկրին կատաղի յորձումով...

Խիտ քօղը հազիւ ճեղքելով՝ վերջնալոյսի մարող շողերը աղօտ լոյս էին սփռում... Մեղմ հողմիկը խաղում էր տերևների մէջ... ջրերի կաթիլները դողդողալով գլորում...

Նա նստած էր՝ կեանքի փոթորկից փշրուած՝ ալեգարդ մազերը կնճռապատ երեսին թափուած... Արտասուքից չորացած աչքերը կիսափակ էին, անգոյն շրթունքները ամուր սեղմուած իրար...

Հեռուից մեղաւաղձոտ, վշտահար երգի հնչիւններ էին գալիս, զարթեցնում յիշողութիւնների անվերջ շարքեր... հրում իրար, փոխարինում, մարտնչում...

Ահա նա կոյս է՝ գողտրիկ, գեղունի... սիրում է քաջին... բայց նրանից խլեցին, տուին մի ուրիշին... Տարիները անցնում են միապաղաղ... Դէթ լուսոյ մի շող... Յետոյ՝ տանջանք, ցաւեր, երեխայք իրար յետեից... Մոռացւում է սուր թախիծ... Հոգսեր, գործ անվերջ... Ահա և այրի է... փոյթ չէ... նա մայր է երջանիկ... Երջանիկ... աւաղ... վաղանցուկ... Նա մայր է տարաբախտ, մայր սեւագետ...

Այդ ի՞նչ ստուերներ են, սգաւոր ստուերներ...

Կծկւում է սիրտը մորմօքիչ ցաւից... տանջւում է անվերջ... Անդրանիկն է դա... նիհար պատանի, ագնիւ

քնքոյշ սրտով... Աքսոր... տառապանք և հեռաւոր երկրում, կարօտ սիրող դէմքի, մեղմիկ մի խօսքի... Սառը ձիւնի տակ՝ խռովայոյդ հոգին՝ գտաւ հանգիստ յաւէրք... Զնչում է երգը... արձագանքը սրտառուչ լեռներում ձայնակցում...

Ի՞նչ է լացում... հում է նա ողբում... Գուցէ իր քաջարի սիրուն Արծուի թաղման եղբն է երգում... Սիրուն Արծուի, որի վեհ սրտում գնդակը խփուեց, թշնամու գնդակը լեռների միջին, երբ նա անվախ իր ժողովրդին տարաբախտ պաշտպան էր հանդիսանում՝ զազան խուժանի դէմ...

Լսիր, դու երգ... մի փշիր՝ գեփիւռ հովիկ... Թող ողբան ժայռեր, քարեր արտասուեն։ Կորաւ քաջ Արծիւ, լեռների իշխանը... Ամպեր պատեց երկինք, կայծակ, որոտ պայթեց... Սև քօղը հագաւ իր դէմքին նրա հարսը չքնաղ... Արիւն արցունքներ կաթ. կաթ հոսում են սև մօր աչքերից...

Բայց սա ի՞նչ տեսել է, կրկին սգաւոր...

Վհուկ դու չար, մահ նենգաւոր... Հեռու... գնա, կորիր... Պանդուխտ, հալածուած, երկրից երկիր թափառում... հմն ես դու. փնտռում... Ի՞նչ ես կորցրել։ Իմ խղճուկ դաւակ... Մութ բանտի մէջ, թէ ծանր բեռ ուսին... Թէ՛ ազատ երկնքի տակ՝ վայելում ես կեանք օտարի գրկում... Հայրենիքդ չքնաղ արիւնով է լուացւում... Երկիրը դժբախտ տանջանքից կծկւում...

Պաասախան չկայ... Քամին է միայն փչում, վշտաբէզ սգում...

Ո՛հ, ուրեմն, դու ես կորած... խոր փոս թողիր իմ սրտում...

Չորացած աչքեր՝ արցունքից կուրացած... դուք վաղ կուրանայիք, չտեսնէիք այս քան ցաւ...

—Ո՛ւր է իմ աղջիկ... լեռների ծաղիկ... շուշան գողտրիկ... դու հւր չքացար... Հարսնացու պճնուած՝ պսակով զարդարուած, թէ՛ վայրենի գազանի դու որսն ես խղճալի...

Հեռու տեսիլներ, մոայլ տեսիլներ... Ի՞նչ էք ինձ խեղդում, հոգիս մորմոքում... Շունչս է միայն մնում... այն էլ վերցրէ՛ք՝ ինձ հանգիստ թողէ՛ք... Թէ՛ սառը գերեզման... այն՝ էլ չէ ինձ արժան... կրկին կը թափուէ՛ք... կրկին կը խեղդուէ՛ք... Հեռու... հեռու...

—Ո՞ւր գնամ... Խնչու եմ այստեղ ձեռներս խաշած նստած...

Անձրեն է ծեծում... արևն՝ այրում... Ո՞ւր է իմ տունը, սիրած անկիւնը... Ահա... հեռուում հրոյ լեզուակներ վառում... մարում... Մուխը օձապտոյտ երկինք է հասնում...

Մնացի որբացած, ինչպէս մենաուոր նոճի... տխուր, վշտահար... Վայ ինձ, վայ գլխիս...

Վերջնալոյսը շողաց, թագնուեց ամպերի մէջ... Հրաժեշտի թախիժը գրկել էր բնութիւնը... Հեռաւոր երգը վաղուց էր դատարել...

Փչում էր հողմը՝ ալեգարդ մագերը երերում՝ փրուում դէմքին սգաւոր... Անձրևի կաթիլներ թափւում են գլխին, այրուող ճակատին, կորացած մէջքին...

Նա չի նկատում... զառանցում է նա... զրուցում իր սիրելիների հետ... Նրան հաղորդում են և գոռոզ մաքեր, ոսկեհուր յոյսեր, իղձեր սրտաբուղիս և տանջանք, կսկիծ...

Անգոյն շրթունքները դողդողում են, անկապ խօսքեր են բերանից թռչում... և սէր, փաղաքշանք և անէծք կրթոտ...

Ժպիտը կիսամեռ... ցաւագարի հառաչք... և վիշտ, ցնծութիւն... իրար են խառնւում... Նրիտասարդ դէմքեր և արիւն և կմաղք՝ իրար հետ գրկախառն՝ սիրոյ երգ են երգում, մահուան պար պարում...

Ամպերը սևացան... որոտը թնդաց... կայծակ փայլակներ օդը ճեղքեցին...

Չորացած, մարած աչքերի առաջ ստուերներ են անցնում... սգաւոր ստուերներ...

Ե. Բահաթուր